«ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի նիստի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 55/03

ք. Երևան,Արշակունյաց 5.417 սենյակ 04.12.2019թ. ժամը 17:15

Համաձայն 22.11.2019թ-ին,քաղաքացի Ալեքսանդր Աբրահամյանի ներկայացուցիչ՝Անի Համբարձումյանից «ՍԳԿԿ» ԻԿԿ-ում ստացված դիմում-բողոքի հետագա ընթացքը ապահովելու նպատակով, քաղաքացի Սամվել Բաբայանի սնանկության գործով կառավարիչ՝ Հարութ Ղարիբյանի գործողությունների /անգործության/ փաստերի նկատմամբ, վերահսկողության գործառույթի պատշաճ իրականացման նպատակով, կառավարչի վարքագծի վերաբերյալ կարգապահական վարույթ հարուցելու և դիմումում արծածված հանգամանքների վերաբերյալ պարզաբանումներ ստանալու համար՝ **ս/թ-ի Դեկտեմբերի 04-ին, 17-00-ին** ՝ ք.Երևան, Արշակունյաց 5 հասցեում, հրավիրվել էր «ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի նիստը: «ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի նիստին.

ԾԱՆՈՒՑՎԱԾ ԷԻՆ՝
Հանձնաժողովի անդամ՝ Հարություն Գևորգյանը
Հանձանժողովի անդամ՝ Արմենակ Ադամյանը
Հանձանժողովի անդամ՝ Ռուբեն Խալաթյանը
Հանձանժողովի անդամ՝ Արմինե Մովսիսյանը

Դիմումատու՝քաղաքացի Ալեքսանդր Աբրահամյանի ներկայացուցիչ՝Անի Համբարձումյանը
Քաղաքացի Սամվել Բաբայանի սնանկության գործով կառավարիչ՝ Հարութ Ղարիբյանը

ՄԱՍՆԱԿՑԵՑԻՆ՝
Հանձնաժողովի Նախագահ՝ Տիգրան Հարությունյանը
Հանձանժողովի անդամ՝ Ռուբեն Խալաթյանը
Հանձանժողովի անդամ՝ Արմենակ Ադամյանը
Հանձանժողովի անդամ՝ Արմինե Մովսիսյանը

Դիմումատու՝քաղաքացի Ալեքսանդր Աբրահամյանի ներկայացուցիչ՝Անի Համբարձումյանը
Քաղաքացի Սամվել Բաբայանի սնանկության գործով կառավարիչ՝ Հարութ Ղարիբյանը

ՕՐԱԿԱՐԿՈՒՄ՝
1.22.11.2019թ-ին,քաղաքացի Ալեքսանդր Աբրահամյանի ներկայացուցիչ՝Անի Համբարձումյանից «ՍԳԿԿ» ԻԿԿ-ում ստացված դիմում-բողոքի հետագա ընթացքը ապահովելու նպատակով, քաղաքացի Սամվել Բաբայանի սնանկության գործով կառավարիչ՝ Հարութ Ղարիբյանի գործողությունների /անգործության/ փաստերի նկատմամբ, վերահսկողության գործառույթի պատշաճ իրականացման, բողոքում նշված փաստական հանգամանքների քննության և սնանկության գործով կառավարչի վարքագծի վերաբերյալ, կարգապահական վարույթ հարուցելու հարցը:

ԼՍԵՑԻՆ-Կարգապահական Հանձնաժողովի նախագահ Տիգրան Հարությունյանը բացեց նիստը և ստուգեց մասնակիցների ինքնությունը: Համաձայն կարգի դիմում բողոքը հակիրճ ներկայացնելու համար ձայն տվեց ներկա դիմումատու քաղաքացի Ալեքսանդր Աբրահամյանի ներկայացուցիչ՝Անի Համբարձումյանին, ով ներկայացրեց նիստի մասնակիցներին դիմում բողոքի էությունը և գործի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը: Մասնավորապես դիմումատուն նշեց որ ինքը հանդիսանալով պարտատեր Ալեքսանդր Աբրահամյանի ներկայացուցիչ՝ գտնում են որ 16.05.2016թ-ի ԵԿԴ/0111/04/15 վճռով սնանկ ճանաչված Սամվել Բաբայանի սնանկության վարույթով 05.08.2016թ-ին սնանկության գործով

կառավարիչ նշանակված Հարութ Ղարիբյանը իր լիազորությունները պատշաճ չի իրականացրել,մասնավորապես պարտապանի գույքը սահմանված ժամկետում չի գույքագրել,սահմանված կարգով չի պահպանել և ժամանակին չի իրականացրել անշարժ գույքի իրացման/վաճառքի/ վերաբերյալ գործողություններ:

Դիմումատուն մասնավորեցրեց նաև ավտոմեքենայի գույքագրման և պահպանման աշխատանքների իր կարծիքով թերությունները, որի արդյունքում ավտոմեքենան այժմ չի հայտաբերվում և չի իրացվում:

Դիմումատուն հանձնաժողովին ներկայացրեց կառավարչին ուղղված գրությունների լուսապատճենները:

Հանձնաժողովի անդամները հարցեր ուղղեցին դիմումատուին և ստացան պատասխաններ:

Հանձնաժողովի նախագահն կանոնակարգի համաձայն իր դիրքորոշումը և բացատրություններ ներկայացնելու համար ձայնի իրավունք տվեց՝ քաղաքացի Սամվել Բաբայանի սնանկության գործով կառավարիչ՝ Հարութ Ղարիբյանին, ով ներկայացրեց հանձնաժողովին բանավոր բացատրություն առ այն որ սնանկելով կառավարչի պարտականությունները փորձել է հայտնաբերել, գույքագրել, գնահատել և իրացնել պարտապանին սեփականության իրավունքով գույքը, որի ընթացքում հայտնաբերվել է անշարժ գույք ԼՂՀ,ք.Ստեփանակերտում և տրանսպորտային միջոց՝Մերսեդես մակնիշի:

Հայտնաբերված գույքի գույքագրման համար 27.03.2017թ-ին ծանուցումներով 14.04.2017թ-ին նշանակվել է գույքագրում, որի վերաբերյալ տեղեկացվել է նաև պարտատիրոջը: Նշանակված օրը ք.Երևան,Նալբանդյան փող.21շ.3բն.պարտապանի հաշվառման հասցեյում մեքենան չի հայտնաբերվել, իսկ պարտապանի կնոջ հայտարարությամբ ավտոմեքենան առգրավվել է ԱԱԾ-ի կողմից:Անշարժ գույքի գույքագրման նպատակով արդեն 15.04.2017թ-ին մեկնել եմ ԼՂՀ և այցելել եմ՝ք.Ստեփանակերտ.Մամիկոնյաց փող.19շ.10բն.:Գույքագրում հնարավոր չի եղել իրականացնել քանի որ բնակարանի դուռը փակ է եղել և բնակարան մուտք գործել հնարավոր չի եղել: Համաձայն կնոջ հայտարարության 25.04.2017թ-ին դիմել եմ ՀՀ ԿԱ ԱԱԾ և խնդրել ստեղծել հնարավորություն գույքագրելու ավտոմեքենան և քննչական գործողությունների ավարտից հետո ավտոմեքենան ի պահ հանձնել իրեն:

Դիմումատուի կողմից ներկայացված փաստաթղթերում առկա է ԱԱԾ-ի պատասխանը, որ ավտոմեքենան դեռ 25.03.2017թ-ին ի պահ է հանձնվել Անդրանիկ Բաբայանին:Այսինքն այն փաստը որ կառավարիչը միջոցներ ձեռք չի առել մեքենան հայտնաբերելու կամ գույքագրելու իրականություն չեն, բացի դրանից նույն մեքենայի հայտնաբերման և առգրավման վերաբերյալ կատարվել և կատարվում են հսկայածավալ աշխատանքներ ԴԱՀԿԾ-ի և Քննչական մարմինների միջոցով. որի վերաբերյալ իր կողմից ներկայացվում է հանձնաժողովին համապատասխան փաստաթղթեր:

Հանձնաժողովի անդամ Ա.Ադամյանը հարց ուղղեց կառավարչին գույքագրման,գնահատման և իրացման ժամկետների ձգձգման վերաբերյալ:

Կառավարիչ՝Հ.Ղարբյանը պատասխանեց, որ գույքագրման,գնահատման և իրացման միջնորդության ժամկետների ձգձգվելը ունեն իրենց օբեկտիվ պատճառները,քանի որ անշարժ գույքը գտնվում է ԼՂՀ-ում և կան դժվարություններ հեռավորությոն հետ կապված հարցերի լուծումների հետ և ինքը երկու անգամ մեկնել է ԼՂՀ գույքագրման նպատակով բայց բնակարանի դուռը փակ է եղել,քանի որ նրա սեփականատերերը գտնվում էին Երևանում և իր հետ չէին համագործակցում գույքի գույքագրման համար:Նույն խոչնդոտները դժվարեցրել են նաև գույքի գնահատման աշխատանքների իրականացմանը, բացի դրանից կար և այժմ էլ կա իրավական խնդիր, քանի որ պարտապանի կինը վիճարկում է գույքերի սեփականության իրավունքը և այդ գույքերը այս օր էլ դեռ վիճելի առարկաներ են:

Հանձնաժողովի անդամ Ռ.Խալաթյանը հարց ուղղեց կառավարչին թե ինչ պատճառով պատշաճ չի իրականացվել տրանսպորտային միջոցի պահպանությունը:

Կառավարիչը պատասխանեց, որ տրանսպորտային միջոցը երբեք էլ իրեն պահպանության չի հանձնվել և մինչ օրս էլ նրա գտվելու տեղը անհայտ է,ուստի ինքը պահպանություն չի իրականացրել ընդհանրապես և բնականաբար չէր կարող այն իրականացնել ոչ պատշաճ:

Կառավարիչը հանձնաժողովի ներկայացրեց ՀՀ Սնանկության դատարանի 25.11.2019թ-ի որոշումը,ըստ որի ինքը ազատվել է քննարկվող վարույթի սնանկության գործով կառավարչի պաշտոնից և այլևս այդ վարույթում սնանկության գործով կառավարիչ չի հանդիսանում:

Հանձնաժողովի նախագահ՝Տ.Հարությունյանը հայտնեց այն կարծիքը, որ կառավարչի կողմից կատարվել են «Սնանկության մասին»ՀՀ օրենքի 29-րդ,56-րդ,76-րդ հոդվածներով նախատեսված ընթացակարգերը և նրա գործողությունները միտված են պահանջների բավարարման համար անհրաժեշտ միջոցների հայթայթմանը և կիրառմանը:

Հանձնաժողովի նախագահը նշեց նաև, որ դիմում միակ փաստական հանգամանքը, որ առկա է՝ դա ժամկետների ձգձգման հանգամանքն է,որը ինչպես կառավարիչը նշեց ունի իր օբեկտիվ պատճառաբանությունները:

Հանձնաժողովի նախագահը խնդրեց անդամներին գնահատել ներկայացված փաստական հանգամանքները, որի շրջանակներում հանձնաժողովի անդամ՝ Ռ.Խալաթյանը հայտնեց այն կարծիքը, որ դիմում նշված փաստական հանգամանքները հիմնականում վերաբերվում են,որ կառավարչի անգործությանը և դիմումը կարդալով ստանում ես այն տպավորությունը, որ պարտատիրոջ ներկայացուցիչը իրեն վարձողին հաշվետվություն է տալիս կատարած աշխատանքների վերաբերյալ և այդ ընթացքում ամեն անգամ շեշտելով, որ իրենք կատարեցին՝ կառավարիչը չկատարեց, իրենք հայտնեցին՝ կառավարչիը չիրագործեց և այդպես շարունակ:

Այդ կապակցությամբ պետք է նշել որ պարտատերերը սնանկության վարույթի լիարժեք և շահագրգիռ մասնակիցներ են ըստ օրենքի և նրանց կողմից նույնպես ինչպես կանոն ձեռնարկվում է պահանջի բավարարմանը ուղղված տարբեր միջոցներ և այդ ընթացքում ձեռք բերված տեղեկատվությունը օգտագործվում են վարույթի ընթացքում և կառավարչի կողմից և դատարանի կողմից և շատ դեպքերում լրացուցիչ նույն միջոցառումների իրականացման կարիք չի լինում և դա ինչպես կանոն դիտվում է որպես համագործակցում այլ ոչ թե որևէ մեկ կողմին անգործության մեջ մեղադրելու հիմք կամ հիմնավորում:Տվյալ դեպքում կառավարչի կողմից օգտագործվել է բազմաբնույթ տեղեկատվություն և կատարվել է մեծ աշխատանք, բայց մինչ օրս այդ աշխատանքները դրական արդյունքներ դեռ չեն տվել, որի բացակայությունն էլ պարտատիրոջը դրդել է այս դիմում-բողոքի իրականացմանը:

Հանձնաժողովի անդամը հայտնեց.որ իր կարծիքով կառավարչի գործողությունները բխել են օրենքից և իրենց մեջ կարգապահական խախտումներ չեն պարունակում և առաջարկեց կարգապահական վարույթը կարճել կառավարչի մեղքի բացակայության պատճառաբանությամբ:

Հանձնաժողովի նախագահ՝Տ.Հարությունյանը նշեց, որ ուսումնասիրելով դիմումը և ներկայացված փաստաթղթերը ակնհայտ է, որ ժամկետների ձգձգումը հիմնականում կապված են պարատպանի գործողությունների հետ, որը փորձում է ձգելով ժամանակ, ընթացքում մարել իր պարտավորությունները, որը և մասնակի իրականացրել է՝մարելով բոլոր պարտավորութ- յունները բացի դիմումատուի հանդեպ պարտավորություններից:

Հանձնաժողովի անդամ Ա.Մովսիսյանը հայտնեց այն կարծիքը,որ տվյալ գործը ունի նաև այլ կողմ,որը իր հետ բերում նաև դժվարություններ,դա այն է,որ պարտապանը հանդիսանում է ազգային հերոս և հանրահայտ անձ է,իսկ նրա կամ նրա հետ կապված գործողությունները իրենց մեջ պարունակում են յուրօրինակ կաշկանդվածություն,որը կարող էր ազդել վարույթի ընթացքում որոշակի գործողությունների իրականացման ժամկետների վրա և իր կարծիքով նաև պատճառ է կառավարչի կողմից այս գործից հրաժարվելու համար:

Հանձնաժողովի անդամը նույնպես հայտնեց.որ իր կարծիքով կառավարչի գործողությունները բխել են օրենքից և իրենց մեջ կարգապահական խախտումներ չեն պարունակում իսկ ժամկետների ձգձգումների վերաբերյալ առաջարկեց ընդունել կառավարչի բերած օբեկտիվ պատճառաբանությունները և կարգապահական վարույթը կարճել կառավարչի մեղքի բացակայության պատճառաբանությամբ:

Հանձնաժողովի անդամները քննարկեցին դիմումում նշված հանգամանքները ուսումնասիրեցին ներկայացված փաստաթղթերը և առարկությունները,տվեցին և ստացան համապատասխան հարցեր և արդյունքում քվերկեցին:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ՝
Կողմ - 4
Դեմ – 0
Չեռնպահ – 0

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ՝

1. 22.11.2019թ-ին,քաղաքացի Ալեքսանդր Աբրահամյանի ներկայացուցիչ՝Անի Համբարձումյանից «ՍԳԿԿ» ԻԿԿ-ում՝ ստացված դիմում-բողոքի հետագա ընթացքը ապահովելու, քաղաքացի Սամվել Բաբայանի սնանկության գործով կառավարիչ՝ Հարութ Ղարիբյանի գործողությունները /անգործություն/ օրենքին և կանոնակարգերին համապատասխանության վերաբերյալ հարուցված վարույթի արդյունքներով՝հաշվի առնելով ՀՀ Սնանկության Դատարանի 25.11.2019թ-ի ԵԿԴ/0111/04/15 որոշմամբ սնանկության գործով կառավարչի այդ պաշտոնից ազատվելու փաստը, սնանկության գործով կառավարչի վարքագծի վերաբերյալ հարուցված կարգապահական վարույթը կարող է կարճվել «Սնանկության գործով կառավարիչների մասնագիտական վարքագծի Էթիկայի» կանոնների խախտման դեպքի /մեղքի/ բացակայության պատճառաբանությամբ:

2.Սույն Եզրակացությունը սահմանված ժամկետում ներկայացնել Դիտորդ Խորհրդին՝ հետագա որոշում կայացնելու նկատառումով:

Հանձնաժողովի Նախագահ՝ Տ.Հարությունյան

Հանձնաժողովի անդամ՝ Ա.Ադամյան

Հանձնաժողովի անդամ՝ Ռ.Խալաթյան

Հանձնաժողովի անդամ՝Ա.Մովսիսյան